91. ՊՈՒՐԹ ԿՅԶՈՂԸ՝ ԹԱՔԱՎՈՐ

Ավալվա վախտը լըմ ա լըմ չի, մի Վան անընով շհար ա լըմ։ Էս Վան շհարումը մի պուրթ կյզող մարթ ա լըմ, մի սիրո՜ւն, սիրո՜ւն բեքնակի նման գյլիզ սիրուն էլ կնիկ ա ուններմ։ Էս մարթը շատ քյասիբ ա լըմ, պուրթ կյզելուց սավահի, ուրիշ էլ սյան կարըմ չի անի։ Էնա, թե պուրթ ունեցող ա լըմ, կանչում են կյզել են տալի ու մի քանի կապեկ են տալի, թե հու չէ, էդ խեղճը մնում ա պարապ-սարապ, տանը կնկա կողքին նստած։ Մի մուդաթ սրան ըսկի պուրթ կյզելու կանչող չը լըմ։ Որ շատ տանը մնում ա հա՜, պակասութինը էս խեղճին գյլիզ ամեն ղուլիցն էլ խլում ա. կաղնում ա։ Էս խեղճի կնկա ջանին, որ շատ հասնըմ ա հա՜. մի օր էս մարթին ասըմ ա.— Ա՜ մարթ, ի՞նչ ես կոնդի նման տանը նստել, տենում ես, որ էլ իլլաջ չունենք, էքուց-էլօր ձին-ձմեռ ա ղաքնեռումս. ալիր չունենք, հաց չունենք, ինչ դի լիլ մեր հալը։ Մարթ ես, տղամարթ ես, աշխարքս լեն ա, բոլ ա, մենակ հու մեր Վանը չի՜, վեր կաց, քյնա՜ ուրիշ տեղերի վրա, բալքյամ մի քիչ կրանաս աշխատանք անիլ։

Մարթը ասըմ ա. «Հա՜, լավ ես ասըմ, ա՜ կնիկ, հենց էքուցվանից վեր կկենամ ու կքնյամ, համա մի պանից վախենում եմ. թե հեշկել իմ ետ տանալը քե կլխից հանող լի, քե խափող լի։ Կնիկ ես, ինչքան չլի, հեշտ կխափվես»։ Կնիկն օրթում կրակն ա ընկնում, թե ինչ էլ որ լի, իրան օրումը խափվիլ չի։

Մարթը ասըմ ա. «Տհենց թե խոսքիդ պինդ ես հա՜, արի իրար

հետ օրթում ուտենք, խոսկ տանք իրար, որ հեշկել մինչև իմ ետ դառնալը դու էլ, ես էլ ընարատ կենանք»։

Պերում են սհանք հացն ու կյինին մեշաեղ են տնում ու մարթը ասում ա. «էս հացը, որ կա նշխարք ա, մեր տեր Յիսուս Քրիստոսի մարմինն ա, կյինին էլ նրա արինն ա. ինքն էլ մեղ վկա լի, որ մենք իրար չխափենք»։

Էս օրթումը ուտելուցը ետը, մարթը վի ա ունում իրան նետն ու աղեղը ու ճանփա ա ընկնում, քյնում ղարիբութին՝ չորս տարով աշխատանք անելու։ Կնիկն էլ մնում ա տանը։

Քրշեր-ցերեկ էն կնիկը մի էն ա աղոթք ա անում, ասում ա. «Տեր աստած, տու ինձ տուր էն ղայդի միտքը, որ ես կարանամ իմ օրթումը պահեմ, տու իմ մարթին աջողութին տուր, սաղութին տուր, ղարիբութենըմը բալքյամ մի քանի կապեկ կարանա աշխատիս։ Ղաղմի ամեն ռավոտ լիսը ծեքելիս, բեքնակը մեր մտնելիս էնա սրա աղոթքը էս ա լըմ։ Սրա մարթի քյնալուցը մի էրկու օր ետը էս կնիկը մի ռավոտ տեղիցը վե ա կենում, տենում բեսի իրա պարցի տակին քսանհինգ մանեթ փող ա տրած, մնում ա բրմացած, ասում ա. «Հալրաթ շան որթի մարթ տրած կլի, որ ինչ ա կլխրհան անի»։ Էդ ասելուցը ետը էլեդ սկսում ա իրան աղոթքը անել։ Էբսի քշերը քնում ա, ռավոտը էլեդ տենում ա բեսի պարցի տակին էլեդ քսանհինգ մանեթ տրած, բրմանում ա, համա պանի կլխի չի ընկնում, թե սա ինչ պան ա։

Սհենց շատ ա անց կենում, թե քիչ՝ էտ էլ աստած ա խարար, էս կնիկը ամեն օր պարցի տակիցը քսանհինգ մանեթ հանում ա ու պահում, հանում ա ու պահում։ Մի վախտ մտիկ ա անում, տեսնում, որ փողը ղլիզ շատացել ա. ի՞նչ անի, ի՞նչ չանի, էս փողերը սու պերում ա իրանց մի հրևան հիվոր են ունենում, քյնում ա նրա կուշտը ասում ա. «Ապի՛, տու ինձ հեր ես, ես քե որթի եմ, մարթս տանը չի, ես էլ մենակ կարըմ չեմ, ինչ որ ուղում եմ անեմ, արի փողը ինձանից՝ քյոմակ արա, ինձ համար տեր շինենք»։

Էս հլիվորը քյնում ա, սրա համար լավ-լղաթին ըմարաթնին կաղնացնում, էս կնիկը էտ ըմարաթնին, թաքավորին լայաղ, լավ-լադաթով սարքըմ ա, կարքըմ ա ու միջումը նստում ա, էլեդ ամեն ռավոտ-բիկուն իրան աղոթքն ա անում։ Մի մուդաթ նհենց հարբստանըմ ա, նհենց հարստանըմ, որ էլ ասելու ոչ, է՛լ տավար, ոչխար, իլխով ծիաննի, մի խոսքով՝ ինչ ղայդի դովլաթ ասես, սա ասրմ ա, էլ ըսկի պակաս տեղ չի թողում։

Սրա մարթն էլ դարիբութենըմը աշխատած ա լըմ, մի իրեք-

չորս հարիր մանեթ, չորս տարին թմամում ա թե չէ, սա վի ա կենում դպա տուն ետ ա տառնըմ։ Կյալիս ա, կյալիս, որ հասնըմ ա իրանց ֆողը հա՛, տենում ա բեսի մի չորան մի սուրու ոչխար ա բածացնում։ Քյնում ա ասըմ. «Զորան ախպեր, ճանփորդ մարթ եմ, սովել եմ, մի քիչ կաթ տու ուտեմ»։ Զորանը սրան կաթն ա տալի, ուտըմ ա պրծնում ու ետով հարցնըմ ա, թե. «Էս ո՞ւմ ոչխարն ա»։ Զորանը ասըմ ա, թե. «Մեր շհարըմը մի պուրթ կյղող կա, նրա ոչխարն ա»։

Էս խեղճ մարթը, որ մանըմ չի, թե պուրթ կյղողի ոչխարն ա, մնում ա սառած կաղնած. թամամ արինը ցմաբում ա, ինքնիրան ասըմ ա. «Վա՜յ, կնիկս նամարդութին ա արել, օրթումը պահել չի. հալբաթ հարուստ բաղրկյան մարթ խափել ա կնկանս, կլուխը մին ա արել, որ էսքան ոչխար ա ետ քցել»։ Մտքումը տնըմ ա, որ տուն հասնելուն հադաղ կնկանը ղնարա-ղնարա կտորի։

Մի քիչ էլ քյնում ա թե չէ, տենում ա բեսի մի սուրու տավար ղաքին չորաննին բածացնում են, էլետ հարցնում ա, թե. «Էս ո՞ւմ տավարն ա»։ Ասըմ են. «Պուրթ կյղողինն ա»։ Մի քիչ էլ քյնում ա մի ծիու իլխու ա ռաստ կյալի։ Էլի հրցնում ա, թե. «Ո՞ւմն ա»։ Ասըմ են. «Պուրթ կյղողինն ա»։ Սա գյլիվ թամամ հվատում ա, որ իրան կնիկը շանորթութին ա արել, իրան խափել ա, ասըմ ա. «Տուն հասնեմ թե չէ, սհաթը ղամես փորը տեմ կոխիլ, սպանիլ տեմ։ Զունքի նա ինձ էդ ղայդի նամարդութին ա արել, ես էլ նրա հախիցը վեր կկյամ»։

Էս մտքումը տնում ա, քյնում։ Քյնում ա, քյնում, հասնըմ ա տուն։ Տենում ա, ի՞նչ, իրան հիլ արած տան իղն ու թողն էլ չկա. տենում ա բեսի ղաքին էն ղայդի ըմարաթնի ա կղնըցրած, որ մարթ մտիկ անելիս ռեխը մնում ա պաց։ Լհե տան տուռն ա հասնըմ թե չէ, իրան կնիկը բրավուրդ անելուն հադաղ վաղ ա տալի, սրա ճտովն ա ընկնում, փթաթվում ա սրան, շատ ուրխանըմ ա, ղրավաշներին հրամայում ա՝ սրան տանում են համամ, լավ-լազաթին լղացնում են, թաքավորի լայաղ պան շորեր են հաբցնում ու եդ պերում։ Էս մարթը մտքումը մին տնում ա զամեն կնկա փորը կոխի, շան նման ստակացնի, մին էլ ասըմ ա. «Քիչ էլ համփերեմ, տեսնամ ոնց ա լըմ»։ Կնկանը հրցնում ա, թե. «Էս որդիա՞ն ա էսքան ղովլաթը»։

Կնիկն էլ դուզ չի ասըմ, թե ոնց ա էլէլ, մենակ ասըմ ա. «Աստոծ մեզ հասցրել ա»։ Մարթը սրա խոսքին հվատում չի։

Սա մի ռավոտ քնիցը վի ա կենում ու ասըմ ա. «Կնի՛կ, էս

բշկեր էրպումս աստած մի հլիվոր մարթի կերպարանքով ինձ ասեց, թե. «Որ տու քու կնկանը վի ունես, քյնաս փլան ախպրի կլխին մի ծառ կա՝ թոկը բցես էն ծառի կլուխը ու մի ծերիցն էլ մի ցվալ կապես, առաջ տու նստես մեջը, կնիկդ մի քանի անքամ բեկ պցրրցնի վիրև ու էլեդ ցածացնի ներքև, եդով էլ տու նրան նհենց անես՝ ձեդ անպատճառ տղա կլի»։

Էս խեղճ կնիկը մարթի խոսքին հվատում ա, շատ էլ ուրբխանում ա, որ իրանց տղա դի լիլ, վի կենում մարթի հետ ճանփա ընկնում քյնում։ Համա էս մարթը մտքումը շանորդութինը դրած ա լըմ, ո՛չ էրպ ա տեսած լըմ, ո՛չ էլ պան. զարիրութենից ետ տառնալիս մի ախպուր ա տեհած լըմ, հըմի էդ խեղճ կնկանը տանում ա էստեղ, որ կլխին մի օյին կյա։ Սհանք քյնում են, քյնում. հասնում են ախպրին. ախպրիցը մի մի ճուր են խմում. եդով թոկը բցում են ծառի կլխովը, մի ծերն էլ ցվալիցն են կապում. առաջ մարթը միչումը նստում ա, կնիկը մի քանի անքամ սրան պցրցնում ա վիրև ու էլեդ քաշացնում, վեր ա պերում, եդով էլ կնիկն ա ցվալի միչին նստում, որ մարթը իրան պցրցնի ու քշըցնի։ Մարթը սրան պցրցնում ա դյլիդ ծառի կլուխն ա հասցնում եդով թոկը ծառից կապում ու թողում քյնում իրան տուն։

Էս խեղճ կնիկը ուտի մնում ա կապած կախլած. չըշարվում ա չըշարվում ա, համա որդի՝ ցվալի ոնխը պինդ կապած. ինքն էլ ծառի ծերին։ Բղավում ա, ծեն ա տալի, համա ո՞ըդի՝ ըրանա քոլի միչին ո՞վ ա լսում նրա ծենը։ Սհենց բանեղ մի վեց-օխտը օր մնում ա կուպած կախլած, ամեն բշկեր էլ սրա քսանհինդ մանները ցվալի մեջն ա կյալի։

Մի օր ոնց ա լըմ, գնտը մի բաղրկյան ա իրան բյարվանով անց կենալիս ա լըմ։ Կյալիս ա էդ ախպրիցը հեռու բյարվանը կաղնացնում ու պեռոները վեր ա պիրում, որ գինչանան. նոբյարներին էլ գարկըմ ա, որ ըլնան ախպրիցը ճուր պիրեն։

Էս նորյարները կյալիս են, տենում են, որ ընսի ծառիցը մի ցվալ ա կուխլած, միչիցն էլ իսանի ծեն ա կյալի։ Վաղ տալով կյալիս են բաղրկյանին ասում են. «Բա սհե-սհե, ընսի մի ցվալ կա կուպած ծառի կլխին, միչիցը իսանի ծեն ա կյալի»։ Բաղրկյանը սհաթը վի ա կենում, բյնում ա ծառիցը վեր ա պիրում, ցվալը պաց ա անում, տեներում միչին ընսի մի սիրո՞ւն, սիրո՞ւն կնիկ ա տրած. տրան ուտիան վի ա ունում ու իրան հետ տանում ա իրան տուն։ Էստեղ մի քանի օր սրան պահելուց նեղը, մի օր էս բաղբրկյանը էս կնկանը սաթադմիշ ա լըմ, ուղում ա ձեռը բցի. կլուխը

մի անի։ Ասում ա. «Քեզ պիրել եմ ինձ համար, պետք ա անպատճառ խոսքս կատարես»։ Կնիկը սրան ասում ա. «Ամո՛թ ա, քու աղամարթութենին, որ մի կտոր հաց ես տվել, ուզում ես հրամես»։ Մի խոսքով բաղրկյանը ինչքան էլ տանջվում ա, կարում չի սրան ձեռ տա, սա մոտ չի թողում։

Բաղրկյանն էլ սրա վրա կզնվում ա, սրան տնում ա մի ղութիկի միչի, ռեխը պինդ փակում ու քցում ծովը։ Ծովի լափուն էս ղութին տանելավ տանում ա, հանում մի շհաբի ղրաղի տուս ա քցում։

Էդտեղ էլ ամեն օր մի քյասիբ տղա իրանց կրակի համար շոփեր, խուշուր-մուշուր հվաքելիս ա լըմ, բեղափիլ տեսնում ա բեսի մի մեծ փետ, ուրխանում ա, ասում ա. «Հեչկել ըիկու որ հվաքեի, սրա կեսի զադամ կարալ չի հվաքեմ», ասում ա ու նի ա մտնում հանում, տեսնում, որ ի՛նչ փետ, ի՛նչ պան, մի փակած ղութիկ ա։ Պաց ա անում, տեսնում՝ միչին մի կնիկ էլ կա, բոլ փող էլ, սրան ընդիան վեր ա ունում, պիրում իրան տուն, լազաթին պատիվ ա տալի էտ կնկանը ու իրան քվոր պես պահում ա։ Մի օր էս կնիկը հրցնում ա էդ տղին. «Ի՞նչ մտքով ես ինձ պահում»։ Տղեն ասում ա. «Ինչպես իմ քիրս, էնպես եմ պահում, ուրիշ միտք չունեմ»։ Էդ կնիկը ասում ա. «Դե որ տհենց ա, տու էլ իմ ախպերն ես, ես քեզ համար ինչ ասես, կանեմ, փողը ինձանից՝ ի՞նչ ուզում ես շինիր, ինչքան ուզում ես կտամ»։

Էս տղեն պերում ա իրան համար լավ-լազաթին ամարաթնի ա կաղնացնում, դովլաթ անում, թաքավորի պես սկսում ա արխեին ապրել։ Սրա էս հարստութենի ծենը հասնում ա թաքավորի ականջը։ Էս տղին դուշման մարթիկ քյնում են թաքավորին ասում. «Բա քու փորը ո՞նց ա վեր ունում, որ քու ֆողումը մի դյաղի մինը էրեկ-մեկէլ օրը մի կտոր հաց էլ չէր ճարում, որ ուտի, էսօր բենիկ քու տներից լավ ամարաթնի ա շի՞նել, քու դովլաթիցը լավ դովլաթ ա շինել ու էքուց-էլօր էլ վեր դի կենալ ասիլ, թե թաքավորը տու չես, ես եմ։ Թաքավորն ապրած կենա, տու քանի թաղա յա, քանի դեռ հլամ կլուխը պըցրցրել չի, արի տու տրա կլխին տու, թող ոտը իրան յորղանի դյորա մեկնի, իրան դյորա թող ժած կյա»։

Թաքավորը միտք ա անում, միտք ու ասում ա. «Ես շատ ուրախ եմ, որ իմ շհաբիս միչին քյասիբը մի կտոր հացի ա տիրացել ու փառք լի աստծուն, օրը հզար պերան փառք, որ նա չի կորցնում իմ քյասիբին ու խեղճին»։ Էդ թաքավորին խարար տվող խային մարթիքը տեսնում են, որ թաքավորը տխրելու տեղակ հլա ուրախացավ, էլ ծեննները կտրում են ու սուս ու փուս ետ տանում։

Սրանից հետո շատ ա անց կենում, թե քիչ, մի օր էդ կնիկը էդ աղին ասում ա. «Աստած թե էս դաղամ մալ ու դովլաթ ա տվել բեդ համար ամոթ ա, որ բու թաքավորին մի անքամ էլա դոնաղ չկանչես, պատիվ չանես։ Քյնա թաքավորի կուշտը, ասա. «Թաքավորն ապրած կենա, համեցեք իմ տուն հաշիս։ Թե որ պան ա թաքավորը կլա, ես լավ պատրաստությին կտեսնամ, լավ պատիվ կտանը։ Թե որ թաքավորը հարցնի, թե էս կերակուրնին, էս զուտրաստությինը ո՞վ ա տեհել, ասա իմ կնիկն ա տեհել։ Թե որ հվատալ չի, տեղդ կնեղի, վնաս չունի ինձ շհանց կտաս, կասես. որ ես եմ պատրաստել»։

Էդ աղն տհենց էլ անում ա, քյնում ա թաքավորին հրավերք ա անում։ Թաքավորը ասում ա. «Աչքիս ու կլխիս վրա. կկյամ»։ Սա վի ա ունում իրան նապիրին ու վադիրին քյնում ա էդ տղի տունը Հաշիս։ Էհե հացի են նստում, սուփրեն փռում են, խորակնին շարում են, էս թաքավորը մնում ա սառած կաղնած, տենում ա բսկի իրա տանն էլ չկա էս դայդի սարը ու կարբիցը ու խորակնեբիցը։ Էս աղին թաքավորը հարցնում ա, թե. «Էս ո՞վ ա պատրաստել»։ Տղեն ասում ա. «Իմ կնիկն ա պատրասակ, թաքավորն ապրած կենա»։ Թաքավորն ասում ա. «Սուտ ես ասում, էս բու կնկա պանը չի, դրուստ ասա, թե չէ կլուխտ թողնել կտամ էս սհաթիսա»։

Էս խեղճ աղեն էլ կարում չի պահի, ասում ա. «Թաքավորն ապրած կենա, իմ բիրացուն ա պատրաստել»։ Ասում ա ու քիրացվին շհանց ա տալի։ Թաքավորը սրա սիրունությինի վրա խելբահան ա լում։ Իտի էլ դան չի ասում, հացը ուտում ա, կյալիս ա տուն թե չէ, մտքթ ա դարկում էտ տղի կուշտը, ասում ա. «Քու բվորը ես սիմ առնիլ»։ Էս աղեն էլ չի՛ ասիլ. «Թաքավոր ա, բսկի որան չէ տանել կլի, ասում ա՝ «Հա՛, լավ էս ասում, թաքավորն ապրած կենա»։ Սրանից հետո պերում են օխտը օր, օխտը բրշեր հրրանիր են անում, զոսակում են թաքավորին էս կնկա վրա։

Պռակվելուցը հետը, մի բիկու թաքավորը կյալիս ա էս կնկա կուշտը, ասում ա. «Էս բշեր բու դոնաղդ եմ»։

Կնիկը ասում ա. «Հայտ նոր եմ եկել բու տունդ, գեռ տանդ խալխի հետ, ունեցածիդ-չունեցածիդ հետ շհանց տուր, հետով հալրաթի դոնաղ էլ կյա՛ս, մոտս էլ կկենաս, ես բունն եմ, տո՛ իմն եռ»։ Թաքավորը էս որ մանում ա, համանչում ա, որ կնիկը իրանիդ խելոր ա խոսում, ձեռաց զապիսկա ա տալի իրան բառասուն կնանոնց վրա, ասում ա. «Ջիմնուտ դլխավորն էլ սա յա, ինչ կա-չկա տանս, սրան շհանց տվեր։ Ինչ որ կասի սա, չիմդ էլ որան լսեցեր»։ Էս կնիկը բյնում ա թաքավորի տան ամեն բունջ ու

պուճախն էլ ման կյալիս, քառասուն կնկա հետ էլ ասըմ, խոսըմ, ինչ որ սա հրամայում ա, ռանց մի խոսք ասելու ձեռաց կատարում են։

Մի օր էս քառասուն կնկանն էլ սա վի ա ունում, ասըմ ա. «Քյնանք ծովի ղրաղին սեհր անենք»։ Քյնում են ծովի ղրաղը թե չէ, տեսնում են բեսի մի գյամի ա քյնում. էս կնիկը կաղնացնել ա տալի, էդ քառասուն կնանոց էլ նստացնում ա, սա գյամչուն ասում ա. «Քշի՛»։ Քյնում են, քյնում, շատ թե քիչ՝ աստոծ ա խաբար, քյնում են մի ցամաք են տես կյալի։ Սկսում են հմի էլ ոտով ճանփա ընկնել. քյնում են, քյնում, էն ճանփին մի մենձ էրի են ռաստ կյալի, նի են մտնում, տեսնըմ, որ բեսի մի մենձ օթախ ա, քառասուն մարթի էլ տեղ կա շինած, մեչտեղն էլ մի մենձ չարխի պղինձ կրակի վրա տրած էրկու արար վուրհավուր խորակ են էփում։ Հրցնում են թե. «Էստեղ ո՞ւմ տեղն ա։ Էտ ո՞ւմ համար եք խորակ էփում»։ Արաբնին ասըմ են. «Էստեղ քառասուն հրամի ա կենըմ, նհանց համար ենք խորակ էփում, բեսի որդի որ ա կկյան»։

Հրամու անըմը մանիլուն հադաղ էս կնանոց սիրտը ճաքում ա, ասըմ են. «Ո՞ւր պերիր մեզ ըստի, հմի որդի որ ա կկյան, մեզ հում-հում կուլ կտան»։ Էս կնիկը սհանց ասըմ ա. «Ըսկի վախիլ միք, ես ինչ որ կասեմ, ինձ լսեցեք։ Հրամիքը, որ կկյան, ես գիդամ, ձեզ կուզենան ձեռ տալ, էն վախտը տուք ասեցեք՝ ամոթ չի ձեր տղամարդութենին, դեռ հլա մի պատիվ տվեք մեզ, ուտենք, խմենք, քեֆ անենք, ետով տուք մերն եք, մենք՝ ծերը, ինչ ուզում եք, արեք։ Որ կասին, թե ի՞նչ եք ուզում, որ պերենք քեֆ անելու, կասեք՝ օխտը տարվա կյինի ու արաղ։ Եփոր կպերեն, նհենց արեք ծեր կենացը խմեն, նհանց հետը խմեցեք։ Նրանցից թաքուն պերաններուդ ստաքանը մոտեցրեք ու կնթկալներուտ տակիցը վեր ածեցեք, չխմե՛ք»։

Էս ասելուցը ետը, մնէլ տեսնում են բեսի քառասուն հրամի տուն մտան. տուն են մտնում թե չէ, մնում են ըրմացած. ասում են. «Օցը իրան պորտովը, ծիտը իրան թևովը ըստի կարըմ չեն ոտ կոխել, տուք էդ ի՞նչ ղայդի միլլեթ եք, որ սիրտ եք արել, եկել մեր տունը»։ Լհե ուզում են սհանց սաթախմիշ լեն, կնանիքը ասում են. «Ամոթ ծեր մարթութենին, մենք ծեր կուշտը ղոնաղ ենք եկել, տուք հլա մի մեզ պատիվ տվեք, ետով ինչ ուզրմ եք, արեք»։ Հրամիքը հրցնում են. «Ի՞նչով եք ուզում, որ ձեզ պատիվ անենք»։ Կնանիքը ասըմ են. «Օխտը տարվա կյինի ու արաղ ենք ուզում»։

Ձեռաց հրամիքնին քյնում են որդիան որդի օխտը տարվա կյինի ու արաղ են պերում ու նստում են, որ քեֆ անեն։ էն կնանիքը մի-մի ստաքան վի են ունում ու ասըմ՝ ծեր կենացը, ու խմում են. նրանից ետո, ինչ որ տալիս են, կնթկալների տակիցը վեր են ածում։

Սհանը շատ են խմում, թե բիչ. մի մուդաթ էս հրամիքը նհենց են հարմոտում, որ բսկի ոտներու վրա կարըմ չեն կաղնեն, խտոր են ընկնում ու մեռածի դայդի քնոտում։ էս կնիկն էլ լհե էդ էր ուզում, պերում ա՝ սհանց ոտերուցը հեշկել կլխներուն էլ սհանց տկլորացնում են, սհանց շորերը իրանք են հաքնում ու սրանց բաի հիլ անրմ ու տուս կյալի բյնում։

Սհենց շատ են բյնում, թե քիչ, մի մուդաթ էլ մի ուրիշ թաքավորի ֆոդումը տուս են կյալի։ Տու մի ասիլ, էդ ֆոդի թաքավորը մեռած ա լըմ, սրա խալիր հվաքված՝ իրանց համար թաքավոր հոկելիս են լըմ։

Բախտ-դուշին վեր են թողում ում կլխին որ վեր եկավ, նրան թարավոր են անում։ Սհանը տաու հյամ շհարիցը հեռու են լըմ վեր եկած. Բախտ-դուշին վեր են թողում չէ, թռչում կյալիս ա էս կընկա կլխին վեր ա կյալի։ Խալիր տեսնում ա, որ բեսի մի դարիր մարթի կլխի վեր էկավ, ասըմ են.—Դուշը դալաթ կլի, մնէլ վեր թոկեր։ Վեր թոկելու հատաղ էլետ կյալիս ու սրա կլխին ա վե կյալի։

էս խալիր տանըմ են սրան թարավոր են շինում։ էս քառասուն կնանոցն էլ վալիր, նադիր են կարրըմ էտ թաքավորի։ էս թաղա թարավորը իրան շհարի դրադին մի մենձ տուն ա շինել տալի։ Մարթիկ էլ տնում ա բոի դրավուլ, որ ով որ դեսը անց կենա, պիտի հաց ուտրցնեն, խմցնեն ու ճանիա տանեն, իրան սուրաթն էլ բաշիլ ա տալիս, պատիցը կալի ա տալիս ու ասըմ ա. «Ով որ հաց կուտի կոլրծնի, սուրաթիս մտիկ կանի ու ա՞խ կրբաշի, նրան պոնեք, պերեր իմ կուշտը»։

Արան բսաի հիլ անենը, քյոռիր-քյուսուրին, ճանվու էկոդբյնոդոդին հաց ուտացնի, մենը էրթանք էս պուրթ կյդոդ մարթի կուշտը, տեսնանը՝ ի՞նչ լալ։

Էս պուրթ կյդոդը կնկանը եփոր ծառի կլխին կապած հիլ արաով, ետ տաոավ, էկավ տուն, տանը մի մուդաթ կենալեն ետը էս մարթեն մի էն դայդի ոչաջոդում պտահեց, մի էն դայդի թարսվեց սրա պանը, որ մի էրկու ամսից ետը խեղճ մարթը գյլիդ տրտակվեց ամեն պանից էլ, էլետ բյասիրացավ։ Տավարի, ոչխա-

րի մեջը էն ղայդի աղար ընկավ, որ չիմն էլ կոտորվեց, տունը քանդվեց. մի խոսքով՝ նհենց լա՜վ, նհենց լա՜վ, որ էլետ ա-ռաչվա ղայդի մի պուրթ կյղելու անեղիցը սավահի ուրիշ էլ պան չմնաց։

Էս մարթը ինքն իրան ասեց. «Հալբաթ էս չիմ իմ կնկա մեղ-քիցն էր, նա մեղավոր չէր, բևում ա, որ նա շատ արթար-ընա-բատ էր կացել, փիսը ես եմ, որ նրա հետ էն ղայդի նամարդութին արի, քյնա՜մ պերեմ կնկաս»։

Սա վեր ա կենում ու ճանփա ա ընկնում. շատ ա քյնում, թե քիչ, կյա՜լի էս թազա թաքավորի շհարումը ճանփեն անց կենա-լիս սրան տանում են էտ տունը, հաց են ուտացնում. մարթը մտիկ ա անում, տենում ա՝ բեսի պատիցը իրան կնկա սուրաթը կախ ա-բած, տենալուն հադաղ սրտիցը մի խոր ա՜խ ա քաշում։ Ախ քա-շելուն հադաղ սրան տանում են թաքավորի կուշտը։ Թաքավորը սրան ճնանչում ա, համա լիս չի քցում, ասում ա. «Սրան տարեք լավ-լաղաթին պահեք, պատիվ տվեք»։

Մի օրից եղը տենում են բեսի մի մարթ էլ եկավ հաց կերավ ու սուրաթին մտիկ անելուն հադաղ ա՜խ քաշեց, սրան էլ են տանում թաքավորի կուշտը։ Թաքավորը տենում ա՝ սա էն բազրկյանն ա։ Դու մի ասիլ՝ իրանից ետը սրան էլ ոչաշողումը կոխում ա, ինչ ունենում ա, չի ունենում, ձեռիցը քյնում ա, տրտակվում ա, մի օր էլ սա ասում ա. «Հալբաթ աստոծ ինձ պատժեց, որ ես էն կնկանը սաղ-սաղ ծովը քցեցի, արի քյնա՜մ ման կյա՜մ, բալքի ծովը մի տեղ հանել ա, քթնեմ ու ետ պերեմ ու իմ քվոր սլես պահեմ նրանց»։ Թաքավորը սրան էլ ա ասում. «Տարեք, պահեցեք»։

Էքսի օրը տենում են բեսի մի տղա էլ եկավ, սրան էլ տանում են ուտացնում են, խմացնում են. սա սուրաթին մտիկ ա անում թե չէ, էլետ ա՜խ ա քաշում. սրան էլ են պռնում, տանում թաքավորի կուշտը, սա էլ էն չոփչին ա լում։ Մանում ա, որ իրան քիրացուն թաքավորի քառասուն կնանոցն էլ վի կալել ու փախել ա, շատ դարդ ա անում ու ինք իրան ասում. «Էսքան դովլաթը, հարստութի-նը ինձ տվեց իմ քիրացուն ու մի անքամ չասեց՝ հալալ ըլի քե, քյնա՜մ չոլե-չոլ ընկնեմ, ման կյա՜մ, բալքի քթնեմ, թե հալալ կա-նի ինձ էս ղադամ դովլաթը, հու էնա ետ կկյա՜մ, թե հու չէ, կասեմ՝ ախպե՜ր, արի քու ապրանքիդ տերութին արա»։

Սրան էլ թաքավորը ճնաչում ա, ասում. «Տարեք պահեցեք»։

Սրանից ետով կյա՜լիս ա էն թաքավորը, որի քառասուն կնա-նիքը էս կնիկը փախցրել էր։ Մի օր սա իրան վազիրին ասում ա.

«Արի ման կյանք դավրիշի կերպարանքով, բայթի կարենանք մի խարար էլա մանանք, տեսնանք՝ իմ կնանոնցը ղվորը տարավ էն կնիկը»

Սհանք էլ ման կյալով, ման կյալով, կյալիս են, տուս կլալի էդ Թաքավորի շհարումը։ Սհանք բյնում են Էնտեղ, որդի խալխին ասնում են. բտի հաց են ուտում պրծնում, մնէլ մտիկ են տնում, տեսնում բեսի էն կնկա սուրաթը բսաի քաշ առած, մտիկ տնելուն հետաղ էս Թաքավորը ա՞խ ա քաշում։ էս որ լսում են. սրան էլ ասնում Թաքավորի կուշտը, Թաքավորը նանչում ա ու սհանց էլ ա դարկում, որ պահեն։

էս Թաքավորը եփոր տեսնում ա իրան հետ պտահած մարթիրը չիմ էլ եկել են, մի օր սհանց տուս ա պերում մի մեյդան տեղ, ցերկով կաղնացնում ա ու չիմնուն էլ կենտ-կենտ հրցնում ա, թե. «Ինչի ախ քաշիր»։ Չիմնուց առաջ պուրթ կյղողին ա հրրցնում։ Պուրթ կյղողը ասում ա. «Թաքավորն ապրած կենա, իմ դարդերս շատ են, որա համար ախ քաշեցի։ Ասում ա. «Ասա՛, տեսնում ի՞նչ ա բու դարդը»։

Պուրթ կյղողն ասում ա. «Ասծանե Թաքուն չի, բեղանից ի՞նչ պահեմ. ես մի սիրուն կնիկ ունեի, մենք շատ բյասիր էինք։ Ես նրան ասեր հիլ արի, բյնացի դարիրութին՝ աշխատանք անելու չորս տարի վաղով։ Կնկանս հետ էլ Քրիստոսի անունով հացով, կյինով օրթում կերանք, որ էրկուսս էլ էնրան բնարատ կենանք, որ մինչև իրար տեսնանք։ Չորս տարի վաղես եփոր Թմամեց, ես դատ էկա տուն, տեսա որ ոնց որ իմ տունը հիլ եմ արել բյնացել՝ նրա իդն ու Թոդն էլ չկա. էն դայդի ամարութին ա կաղնացրած իմ տան տեղը, որ Թաքավորի լայաղ մալ ու դովլաթին էլ ծեր ու պուճախ չկա, էնրան ա հարստացել իմ կնիկը։ Ես ինձ ու ինձ ասեցի. «Հայրաթ իմ կնիկը բնարատ չի կացել, շանորթութին ա տրել, հարուստ մարթի սիրուղ ա պահել, որ էս դաղամ դովլաթի տեր ա տասել»։ Միտը տրի, միտը տրի, մին, ասի. դամես փորը կսիեմ, շան դայդի սատկացնեմ, մնէլ չարի. մի օր խափեցի էն խեղճին, թե տատոծ էրտղումս ինձ ասեց, որ վլան ախպրի կշտին ձեղ բեխա կրի։ Սհենց խափլութինով խեղճին դուղ էն ծառի կլուխը պրցրցրի գվալումը տրած, թոկը պինդ կապեցի ծտրիցը, եկա տուն, ասացի՝ թող ծառի կլխին սոված սատկի, դուրդուդուշի փաղ լի, չունչի նա էդ դայդի նամարդութին արալ։ Իմ տուն կյալացը եար մի ամիս չրաշեց, ինչ որ ապրանք-դովլաթ, աուն-աեղ ունեի, չիմն էլ ձեռիցս բյնաց, բար ու բանդ լալ, ես էլեսա մնացի

էլ էն քյասիբը. սիրտս ասեց՝ իմ կնիկը մեղավոր չէր, տրա համար աստոծ ինձ պատժեց։ Ուրիշ էլ իլլաչ չգտա, էլետ նետս ու աղեղս վե կալա, ասեցի՝ քյնամ աշխարե-աշխար ման կյամ, բալքի մի խաբար մտնամ իմ կնկանիցը։ Էկա էստեղ էն տանը հաց կերա, մի սուրաթ կար էնտեղ կախ արած, շատ նման էր իմ կնկանը. տրա համար էլ ախ քաշեցի։

Տրանից ետով բազրկյանին ա հրցնում, թե. «Դու ինչի՞ ախ քաշեցիր»։ Նա էլ ասում ա. «Թաքավորն ապրած կենա. էտ կնիկը ինչ էտ մարթը ասըմ ա, ես տեհա ծառիցը կախ արած, վե պիրի տարա իմ տունը, մի էրկու իրեք օր պահելուց ետը, աստծանեն թաքուն չի, քեզանից ինչ պահեմ, ուզեցի, թե տրան ձեռ տամ. կլուխը ինձ հետ մի անի, մոտ չթողեց։ Ես կզնվեցի վրեն, մի ղուիկի միչի տրի ու ծովը քցեցի, տրանից ետը ոչաջողումը ինձ կոխեց, ինչ հարստութին ունեի, ձեռիցս քյնաց։ Ես ինձ ու ինձ ասեցի՝ քյնամ աշխարե-աշխար ման կյամ, բալքի սաղ, թե մեռած, ծովը մի տեղ հանած կլնի, քթնեմ էլեղ ետ պերեմ իմ բվոր պես պահեմ։ Եկա էս տանը հաց կերա. էնտեղ մի սուրաթ էր կախ արած, շատ նման էր նրան, տեսա թե չէ, ախ քաշեցի. երանի, թե մի հետ էլ նրան տեննամ, նրանից ետը թեկուզ մեռնեմ էլ դարդ չեմ անիլ»։

Տրանից ետը չոփչուն ա հրցնում. թե. «Ինչի՞ ախ քաշեցիր. տուս։ Տա՜ էլ ասըմ ա. «Էդ կնիկը բթս. վե կալա պիչի տուն՝ սպահեցի, տա՜ ինձ հարցրեց, թե՝ ինձ ինչ մտքով ես պահում, ես ասեցի, թե՝ ոնց որ իմ քիրս. էն դուչի մտքով եմ պահում։ Տրանից ետը էտ կնիկը ինձ էնքան փող, դովլաթ տվեց, որ թաքավորի վայաղ։ Մեր ֆողի թաքավորը իմ տունը ղոնաղ էր եկել, հվանեց էտ իմ քիրացվին, եղո տրա վրա փսակվեց. մի էրկու օրից եղը մացա, որ էտ իմ քիրացուն թաքավորի քառասուն կնանոցն էլ վեր ա կալել ու փախե։ ա. ես էլ վեր կացա նրա ետնա ման եմ կյալի. քթնեմ որ կա՜ իրան տված դովլաթը ինձ հալալ անի, գյա՜ թե չէ կյա՜ իրան ապրանքին տիրութին անի. հաց ուտելիս էն տանը նրա սուրաթի ղայդի մի սուրաթ տեհա դրա համար էլ ա՞խ քաշեցի։ Տրանից ետով թաքավորն էլ իրան կլխի էկածն ա ասըմ։ Մինմին քառասուն հրամիքն էլ են կենտ-կենտ իրանց կլխի եկածն ասըմ։ Ջիմնուն էլ խոսցնում պրծընում ա, հա՜ եդ ա տառնըմ էս պուրթ կյղողին, ասը։՝ ա. «Հու մացար, որ էս ղադամ մարթի կլխին օյին էկողը քու կնիկն ա էլել։ Թե որ նա էսքան մարթի կլուխ չի վի պերել, տու՜ ոնց իր սիրտ անըմ նրա կլխին էդ ղայդի օյին իր կյալի. համի ասա տեննամ՝ քու պատիժը ի՞նչ աս։

Էս խեղճ պուրթ կլղողը ասում ա. «Ես արինը քն հալալ ա, Թարավորն ապրած կենա։ Կլուխս կտրիլ տուր։» Էդ վախտը, էդ Թաքավորը նոր լիս ա քցում պուրթ կլղողին, ասում ա. «Էդքան խալխի կլխի դին էկողը ես եմ, ես քու կնիկն եմ»։

Դրանից հետո իրան ոհաթին ասում ա. «Էս իմ հալալ մարթն ա. Թե սրան Թաքավոր կանեք, ես էլ կմնամ էստեղ, Թե հու չէ, ես իմ մարթին վե իմ ունում, քյնում եմ տունս։ Էս ասելուցը ետը էն ոհաթը էս պուրթ կլղողին Թաքավոր են օծում, էս կնիկն էլ Թարուհի ա տանում։

Դրանից եղը էս կնիկը էն սովդաքարին ասում ա. «Տու քյնա՞ բու տունդ, բու կորցրած հարստութինը ետ կքանեսս։ Ղորթ որ. սովդարարը կյալիս ա տուն Թե չէ, աջողութինը աջողուԹենի վրա ա սրան կյալի, ինչ որ սա անում ա, մինը հինդ ա տանում։ Մի ամիս անց չի կենում, սա էննց ա հարստանում, որ առաչվանից տհա շատ պուլաթի ու փուլի տեր ա տանում։ Ջուփ հվաքողին էլ ասում ա. «Քյնա՞, աստած բու պանն աչողի, ինչ որ տվել եմ քեզ, բու մոր կաթնի պես հալալ լի քեզ։ Էս քառասուն կնանոցն էլ տալիս տ էն Թարավորին ու տհանց էլ ա ճամփու տնում։

Հրամիրներին էլ համ իրանց շորերն ա ետ տալի, համ էլ բոլ փող ա բաժանում ու ճանփա բցում։ Իրան մարթն էլ սկսում ա լավ-յուղաթին Թարավորութին անել ու ոհաթը կառավարել։

Շատը ընդի, խերը ըստի։ Աստծանն իրեք խնձոր վե կյա՞. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին։